

ՍԵԴԱ ՄԱՐԱԲՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՅՈՒ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրիգոր Խլաթեցին (1349—1425 թթ.) միջնադարյան հայ մշակույթի նշանավոր գործիչներից է, մատենագիր, պատմական, վարքագրական, վկայարանական երկերի, մեկնությունների, բանաստեղծությունների (գանձ, տաղ, մեղեդի, շափածո հանելուկ, հիշատակարան, ներբող), ծիսական-գրական ժողովածուների հեղինակ, մանկավարժ, երաժիշտ, գրիչ և նկարիչ:

Սովորել է ժամանակի բարձրագույն դպրոցում, Հովհաննես Ռրոտնեցու համալսարանում, Գրիգոր Տաթևացու, Գևորգ Երզնկացու և այլոց հետ միասին: Վարդապետական աստիճան է ստացել Հ. Ռրոտնեցու լծակից Սարգիս Ապրակունեցի բաբունապետից և ամբողջովին նվիրվել իր սիրած բնագավառներին, որոնց մեջ առանձին տեղ էր գրավում գրչությունը: Գրում էր, բնդօրինակում, խմբագրում, հորինում, նկարում, սրբագրում, նորոգում, լրացնում, հղանակավորում, սովորեցնում:

Թովմա Մեծոփեցին իր Պատմության մեջ երկու անգամ անդրադառնում է Խլաթեցուն և երկու դեպքում էլ չի մոռանում շեշտելու նրա գործունեության այդ բնագավառը: «Եւ հիսուն ամ (մյուս անգամ՝ «հիսուն հինգ ամ»—Ս. Մ.),—գրում է նա,—գիրս գրեաց տիւ և գիշեր, անհանգիստ տքնութեամբ, որպէս գիտակ է գաղտնեաց գիտակն»<sup>1</sup>: «...Ձի գրէր յամենայն ժամ,—լրացնում է Առաքել Բաղիշեցին,—յամարայնի և ի ձմերայնի, յաշուն և ի գարուն, ի տրէ և ի գիշերի, ի տուն և ի դուրս, ի վանք և ի գեօղ և ի քաղաք: Եւ զայս ոչ եթէ ի մանկութեան ժամանակն միայն, այլ ի ծերութեան, մինչև յօր նահատակութեան»: Իսկ ինչ էր անում գրածը: «Գրէր և վաճառէր և զգինն տայր կարատելոց, և ոչ միայն քրիստոնէից, այլև այլազգաց ևս առնէր ողորմութիւն»<sup>2</sup>: «Եւ զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր»,—լրացնում է Թովմա Մեծոփեցին: Ուրիշները նրան համարում էին «արգիւնական հոետոր», «անհամեմատ քարտուղար», «տիեզերալոյս վարդապետ» և այլն:

Գրիգոր Խլաթեցին գրչությամբ զբաղվել է շատ վաղ հասակից: 1415 թ. Երուսաղեմում բնդօրինակած ձեռագրում ասում է, որ «ԿԶ. (66) ամաց եմ ես ու եմ. (48) տարւոյ արեղայ. և զայս ճառերս («Յաճախապատում ճառք»

1 Յ. Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ և յաշորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 42, 85:

2 Մատենադարան, ձեռ. № 4866, էջ 251ա:

—Ս. Մ.) շեմ տեսել, և ոչ ի մեր երկիրն կային սոքա՝ Յաճախապատումս և կամ ներբողեանքս ասացեալ ի Վարդանայ բանիրուն վարդապետէ»<sup>3</sup>:

Այստեղից երևում է, որ Գրիգոր Խլաթեցին գրչությամբ գրադվել է 18 տարեկան հասակից (66—48=18), այսինքն 1367 թվականից (1415—48=1367) և շարունակել մինչև «յօր նահատակութեան», այսինքն 58 տարի: Եվ երկրորդ, որ նա ընդօրինակել է ոչ միայն իրեն հանդիպած կամ պատվիրած գրքերը, այլ ընտրել, տարիներով որոնել, գտել, արտագրել ու շրջանառության մեջ է գրել իր նախասիրած, ավելի արժեքավոր գրքերը: Այս ավելի պարզ է երևում նույն հիշատակարանի շափածո շարունակության մեջ.

«...որ ցանկացայ այսմ տառի  
գրոց մերոյս կուսաւորչի.  
որ ի վաղուց փափազէի  
և որոնեալ՝ շգտանէի:  
Մինչ որ յերուսաղէմ եկի,  
եւ աստ գրտի գոր ցանկայի,  
Յոր ձեռնարկեալ իմ գրեցի...»:

### Սակայն՝

«Մին կարօտ այլ կայ ի սրտի  
Մեղապարտիս իմ Գրիգորի,  
Որ Չգան անուն գիրքն Յակորի  
Ջայն Մրժբնայ հայրապետի,  
Ջայն այլ գրեմ հողըս գերի,  
Ընդ լուսատու այս բաների,  
Որ երկօրեանն ի մի տրտի  
Լիցին բաներս հոգելի...»<sup>4</sup>:

Կարողացել է նա «Չգոն» գիրքն ընդօրինակելու իր ցանկությունը կատարել թե ոչ, առայժմ հայտնի չէ:

Իր նախասիրած հեղինակի ձեռագիրը տեսնելու և ընդօրինակելու ցանկությունն էր, որ 1387 թ. կանկ-Քամուրի մոլեգնության տարում, նրան Ապրակունիսից տուն տանելու փոխարեն տարավ Այրիվանք, Մխիթար Այրիվանեցու Գանձարանի համար. «Տէր Մխիթարն ի ՉԼԵ (1286) թրին ասացեալ էր գիր բանսն, և Գրիգոր վարդապետն ի ՊԼԶ (1387) թին հանդիպեցաւ նորա բանիցն»<sup>5</sup>:

Այդ առիթով Խլաթեցին գրում է.

«ՊԼԶ (1387).  
Այլև գ՛րիգոր մեղաք լրցեալ,  
Եւ արեղայ անամբ կոչեալ...  
Որ յետ հարեւր ամաց անցեալ  
Մխիթարայ բանիցս ոգեալ,  
Ի յԱյրիվանս մեզ պատահեալ,  
Փափազ սրտիս եղև լրցեալ

<sup>3</sup> Մատենադարան, ձեռ. № 8775, էջ 315ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մ. Ա, Երևան, 1955, էջ 178:

<sup>4</sup> Մատենադարան, ձեռ. № 8775, էջ 220ա—220բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԾ դարի հիշատակարաններ, մ. Գ, էջ 339:

<sup>5</sup> Նույն տեղում, ձեռ. № 6529, էջ 4բ:

Ձի ի վազուց հետէ րդձեալ  
Տեսլեան տեղոյս ես տենչացեալ  
Նաև բանից շնորհաւք լըցեալ,  
Մխիթարայ, զոր ասացեալ,  
Քան զկամացս իմ կատարել  
Քսան ու վեց ամ յառաջեալ  
Ձի Այրիվանաց անուն լրեալ  
Ի ընտիր գանձուցքս հանդիպեալ»<sup>6</sup>;

Հետագայում ոչ միայն հնագույն ձեռագրեր է արտագրում, այլև պահպանելով հնի առողջ մասը՝ լրացնում և ամբողջացնում է ձեռագիրը<sup>7</sup>, նույնիսկ թանարով նորից անցնում է խունացած ու աղտոտացած տողերի, էջերի, պրակների վրայով<sup>8</sup>, կամ օգնում է ուրիշներին՝ առանձին պրակներ ու թերթեր գրելով՝ ավարտելու մատչանը<sup>9</sup>: Իսկ ինքը, ինչպես վկայում է Առաքել Բաղիշեցին, գրում է գիշեր ու ցերեկ, որպես.

«Քաշ հոնտոր և բանասէր,  
Երագարան ու աղօթասէր,  
Գրիշ արագ, աշխատասէր,  
Յաւե վարժիչ, իմաստասէր»<sup>10</sup>:

Ինչո՞վ բացատրել պատմիչի, րարունապետի, վարքագրի ու բանաստեղծի, տարբեր մարդկանց կողմից հասարակական հոգսերով ծանրաբեռնված, որբեր խնամող և գերիներ փրկող Գրիգոր Խլաթեցու այսքան «գրչասիրությունը», այսինքն ձեռագրեր ընդօրինակելու անկասելի սերը: Պատճառը կանկթամուրի Հայաստան կատարած աշխարհավեր արշավանքների ահավոր հետևանքներն էին: «Աղբյուրների վկայություններից երևում է, — գրում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, — որ կանկթամուրի արշավանքների ժամանակ Անդրրկովկասի և Հայաստանի բնակչության կազմի մեջ տեղի էին ունեցել նոր փոփոխություններ... Իրն-Արարշահի ասելով՝ կանկթամուրի սովորությունն էր փոփոխել զորքերի և ժողովուրդների բնակչության տեղերը: ...Նրբ նա տիրում էր որևէ մի բաղաբի՝ անպատճառ զորքերի մի մասն այնտեղ էր բնակեցնում և այդ երկրում էր թողնում, իսկ այդ աշխարհի մարդկանց մի մասը փոխադրում էր և բնակեցնում ուրիշ երկրում»<sup>11</sup>: Հայաստանը բացառություն չէր կազմում: կանկթամուրի բնակեցրած այլազգիների ներկայությունը աշխուժացնում է վաղուց Հայաստանում բնակված այլազգիներին, որոնք վերսկսում են բռնի հավատափոխությունը, դարձնելով այն մասսայական երևույթ և ավելի են ծանրացնում հայ ժողովրդի վիճակը: Տառապանքներով լի էր հայ ժողովրդի կյանքը նաև կանկթամուրի արշավանքների նախօրյակին և իր դառնությամբ կարող էր զիջել միայն այդ արշավանքների ժամանակ ստեղծված անտանելի վիճակին: Գրիգոր Խլաթեցին ապրել է իր ժողովրդի բախտով, տեսել, զգացել և ասպա լանկթամուրյան սարսափները նկարագրել իր ողբում<sup>12</sup>:

<sup>6</sup> Նույն տեղում, ձեռ. № 6529, էջ 4ր, 5ա:

<sup>7</sup> Նույն տեղում, ձեռ. № 6792:

<sup>8</sup> Նույն տեղում, ձեռ. № 2783:

<sup>9</sup> Նույն տեղում, ձեռ. № 4884, 4522:

<sup>10</sup> Նույն տեղում, ձեռ. № 8639, էջ 146ա:

<sup>11</sup> Տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 372—373:

<sup>12</sup> Լ. Խաչիկյան, Ժժ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 247:

Ժողովրդի ճակատագիրը բաժանում էր նաև նրա մշակույթը: Արշավանքների, կողոպուտի ու ավերածությունների հետևանքով ձեռագրական հսկայական կորուստներ են եղել: «Լանկթիմուրն, որ բոստ աւանդութեան,—գրում է Ղ. Ալիշանը,—ժողովել տուած է զգրեանս, և իր մայրաքաղաքին Սմրղանդի ամուր աշտարակի մի մէջ պահել»: Ավանդություններն, անշուշտ, հիմք են ունենում: Ժամանակակից Մխիթար Ապարանեցին վկայում է, որ Մակվի բարաբերդի մէջ, որն հայտնի է «Մակն Մակուայ» անունով, «հիսուն լիար գիրք ավելի կայ՝ միայն ի Սըսայ բերած», որոնք միայն կրոնների միաբանության խնդիրների վերաբերյալ գրքեր էին, իսկ հայերեն այլևայլ կողմերը տարածված գրքերը. «եթե հնար էր զամենայն ժողովել ի մի վայր, ավելի գոյր՝ քան զհազար բռն»<sup>13</sup>: Պետք էր փրկել եղածը, բազմացվեր ապագային փոխանցելու և տարածվեր ժողովրդի մէջ՝ հավատը անսասան պահելու համար:

Աշխուժացել էին նաև միարարները, կաթոլիկ եկեղեցու գործակալները: Սրանց դեմ Հովհաննես Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և նրանց աշակերտները բազմաթիվ գործեր էին ստեղծել, որոնք նույնպես բազմացնելու և տարածելու կարիք էին զգում: Հենց այս պատճառով էր, որ Գրիգոր Տաթևացին Մեծոփա նորաբաց բարձր տիպի դպրոցին գրչության թեքում տվեց<sup>14</sup>: Այդ գործն էր կատարում նաև մեծ բարունապետների գաղափարակից Գրիգոր Խլաթեցին:

Այժմ փորձենք ի մի բերել Գրիգոր Խլաթեցու մեզ հայտնի ձեռագրական ժառանգությունը, որից հետո միայն հնարավոր կլինի պարզել նրա ընդհանուր մատենագրական՝ ինքնուրույն ստեղծագործությունների և խմբագրական գործունեության սահմանները: Երբեմն ամբողջական ձեռագիրն է նրա երկը, ինչպես՝ Հայոց պատմությունը, որը մեզ չի հասել, Հովհաննու Ավետարանի մեկնությունը և Վարդանի Արարածոց մեկնության համառոտությունը: Մյուս դեպքում՝ իր ընդօրինակած որևէ ձեռագրում՝ նրա երկը հավելված է կամ հիշատակարան, իսկ երբեմն էլ իր խմբագրությամբ ստեղծված ժողովածու է, ներհյուսված սեփական ստեղծագործություններով, ինչպես Հայսմավուրք, Գանձարան և Տոնական ժողովածուները:

Գրիգոր Խլաթեցու ձեռագրական ժառանգության մի մասը մեզ է հասել ինքնագրով և ուրիշների հետ համատեղ գրված, մյուս մասը՝ Խլաթեցու գրած ձեռագրերի ընդօրինակություններն են, որոնց հիշատակարաններում կամ խորագրերում հիշվում են, որ ընդօրինակված է Գրիգոր Մերենցի օրինակից:

Այժմ Գրիգոր Խլաթեցու ձեռագրական ժառանգությունը ներկայացնում ենք ժամանակագրական կարգով:

1. Տօնական. գրիչ Գրիգոր որդի Մերի և Խոյանդի, ԺԳ դ., գրել է պարոն Հնդուի և նրա կողակից Խութլու խաթունի համար:

Հովհաննեսի զավակը սպանվում է անօրենների ձեռքից, ստացողի ժառանգն է դառնում իր եղբոր որդի Զաքարեն, ապա Զիման մամը, որը նաև նորոգել է տալիս ձեռագիրը<sup>15</sup>: Ձեռագրի տարբեր ժամանակների, այսինքն՝ Զաքարեի, ապա Զիմանի վերաբերյալ հիշատակագրությունները գրել է Խլա-

<sup>13</sup> Ղ. Ալիշան, Հայաստան, մ. Ա., Վենետիկ, 1901, էջ 11—12:

<sup>14</sup> Ա. Մարեոսյան, Գրիգոր Տաթևացին և Մեծոփա վանքի դպրոցի հիմնադրումը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, № 2, էջ 146—156:

<sup>15</sup> Մատենադարան, ձեռ. № 4803:

թեցին: Ուրեմն երկար ժամանակ ձեռագիրը պահվել է աշնտեղ, որտեղ ապրել է Գրիգոր Խլաթեցին:

Սույն ձեռագրի գրչությունը տարբերվում է Խլաթեցու՝ մեզ հայտնի բոլոր ձեռագրերի գրչությունից: Եթե ծնողների անունը պահպանված չլիներ, դժվար թե սույն ձեռագիրը ընծայվեր Խլաթեցուն: Մեր կարծիքով այն Խլաթեցու առաջին ձեռագրերից է: Իրա ապացույցն է նաև այն, որ Գրիգորը այստեղ միայն «գրիչ» է, «գծողակ», «գրողակ», «փցնամատ գրող» և ոչ «սպասաւոր» կամ «խնդրող բանի» վարդապետ կամ բարունի: Ուրեմն, Խլաթեցին այն գրել է մինչև վարդապետ ձեռնադրվելը, կամ համալսարան ավարտելը:

2. Գանձարան Մխիթարայ Այրիվանեցույ. գրիչ Գրիգոր Խլաթեցի, 1387 թ.: Ինքնագիրը մեզ չի հասել: Այն Մխիթար Այրիվանեցու 1286 թ. գրած Գանձարանի ընդօրինակությունն է: Մատենադարանի № 4011, 6529 և 3540 ձեռագրերում, որոնք Խլաթեցու խմբագրած Գանձարաններից են արտադրված, այդ մասին պահպանվել է հետևյալ հիշատակարանը, որը ամենայն հավանականությամբ Գրիգոր Խլաթեցին է գրել:

«ԻԱ (21) գանձ կայ տէր Մխիթարայ Այրիվանեցույն ի գիրքս և այս Բ (2) երգս նորկերտ գրոց և պատկերաց սրբոց»<sup>16</sup>: Այնուհետև հետևում է Խլաթեցու հիշատակարանի հիման վրա գրված սույն վկայությունը. «Տէր Մխիթարն ի ՉԼԵ (1286) թրին ասացեալ էր զիւր բանսն, և Գրիգոր վարդապետն ի ՊԼԶ (1387) թին հանդիպեցաւ նորա բանիցն»<sup>17</sup>:

Եվ վերջապես Գրիգոր Խլաթեցու Հիշատակարանը, ՊԼԶ (1387) թվականից (տե՛ս աստ, էջ 174—175):

3. Ուլիափոս ժողովածու. գրիչ Գրիգոր վարդապետ, 1391 թ., վաչր Սուխարա կամ Խառարաստա վանք: Արտադրված է ուխտի առաջնորդ Զաքեոս եպիսկոպոսի համար, որը «թող զայս այլ և շատ աւգտակար գրեանք ստացաւ»<sup>18</sup>, որոնց մի մասը հավանաբար Գրիգորն էր գրել: Առաջին անգամ այստեղ Գրիգորը հիշվում է որպես վարդապետ:

4. Աւետարան. գրիչ Գրիգոր վարդապետ, 1393 թ., ստացող՝ Հովհաննես քահանա: Ձեռագիրն սկսում է «ի վանս Սուհարայ որ այժմ կոչի Խառարաստայ.. և աւարտեցաւ ի վանս Յիպնայ... ի թուականիս Հայոց ի ՊԽԲ (1393) ամի, յամսեանն արեգի»<sup>19</sup>: Հիշատակարանում նկարագրվում է այն ծանր վիճակը, որ ապրում էր հայ ժողովուրդը և ավարտվում Զաքարիա Աղթամարցու նահատակության մասին ողբով: «Աւետարանը զարդարուած է Քրիստոսի մարդեղութեան տասնչորս և չորս ավետարանիչների եօթը պատկերներով»<sup>20</sup>:

5. Գանձարան. փոքրագիր, միասյուն գրությամբ, գրած է «[ի խնդրոյ] Աստուածատուր քահանայի, ձեռամբ Գր[իգորի] պիտակ անուն բանի խըն[դրողի] ի վանս Յիպնայ, ընդ հովանե[աւ] [ամե]նազօր սուրբ նշանի ի Պ... թրականութեանս Հայի...»<sup>21</sup>: Քայքայվածության հետևանքով թվականի տաս-

16 Մատենադարան, ձեռ. № 4011, էջ 3բ, № 6529, էջ 4բ:

17 Նույն տեղում:

18 Հ. Քոփեյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքի, Վենետիկ, 1962, էջ 20—21:

19 Ն. Լալայան, Զավախք, «Ազգագրական հանդես», Բ տարի, Բ գիրք, Թիֆլիս, 1897 թ., էջ 281—284, Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԳ դարի հիշատակարաններ, էջ 599—601:

20 «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, էջ 282:

21 Մատենադարան, ձեռ. № 8366, էջ 212ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԵ դարի հիշատակարաններ, մ. Գ, 1967, էջ 365:

նավորն ու միավորը բացակայում են, իսկ նրանք եղել են, այլապես միայն պահպանված թվանշանից դատելով կստանանք 1351 թվականը, երբ Խլաթեցին երկու տարեկան էր, այնինչ իրեն համարում է «սպասաւոր քանի»: Մատենադարանի գիտաշխատակից է. Հարությունյանը Մխիթար Այրիվանեցու գրական ժառանգութունն ուսումնասիրելիս նկատում է, որ Գրիգոր Խլաթեցին սույն, № 8366 ձեռագիրը ընդօրինակել է ավելի վաղ, քան 1387 թ., երբ դեռ ձեռքի տակ չունեի Այրիվանեցու Գանձարանի ընդօրինակութունը, որ այն գրվել է 1360—61 թթ. և 1387 թ. միջև ընկած ժամանակաշրջանում<sup>22</sup>: Բայց որոշ հանգամանքներ նկատի ունենալով պետք է ընդօրինակութունը մի քիչ ուշ կատարված համարել: Բանն այն է, որ Խլաթեցին իրեն այդտեղ համարում է «սպասաւոր քանի» և «բարունի», որին նա արժանացել է մի քանի տարի անց:

6. Մուշտոց. Մատենադարանի № 4884 ձեռագիրը երեք գրիչների գործ է, որոնցից միայն Ստեփանոս գրչի անունն է պահպանվել: Ծաղկողը Սարգիսն է, ստացողը Հովհաննեսը: 220—278 թերթերի գրիչը Գրիգոր Խլաթեցին է, ինչպես երևում է գրութունից: Ձեռագիրը գրված է Լանկ-Քամուրի արշավանքների ժամանակ, ուրեմն ժԳ դարի վերջում, պահպանվել են մի քանի մանր հիշատակագրութուններ: Գրանցից մեկում կարդում ենք. «Ով եղբարք անմեղադիր լերուք, զի բազում խաբարս և խեղճս լսեաք ի ձեռաց Քամուրէն և սրտերս իբրև զնաւ անհանգիստ կենայր, վասն այնոր բազում սխալեցաք ի գիրս: Անմեղադիր լերուք աղաչեմ. զի ժամանակս յոյժ դառն էր»<sup>23</sup>:

7. Գանձարան. Գրիգոր Խլաթեցին 1400 թ. գրում է մի Գանձարան, որից կատարված ընդօրինակութուններ են մեղ հասել, ինչպես Մատենադարանի №№ 4011, 6529, 3540 և էջմիածնի Մայր աթոռի № 1 գանձարանները: Հիշատակարանը ավարտվում է 1399 թվականով. «Ի յութ հարիւր Հայոց թվին և բառասուն և ութ ամին (1399)»<sup>24</sup>, բայց հիշատակվում են նրանից հետո կատարված Սերաստիայի և Վրաստանի ավերումը, որոնք տեղի են ունեցել 1400 թվականին: Հետևաբար ձեռագիրը ավարտվել է 1400 թվականին: Մատենադարանի № 4011 և 6529 (սրանից միայն սկզբի 6 թերթն է պահպանվել և համապատասխանում է առաջինի սկզբի թերթերին) ձեռագրերը հիշատակարան չունեն և Խլաթեցու ինքնագիրը չեն: Այդ պարզ երևում է գրչութունից, նախ սրանք գրությամբ իրար նման չեն, ապա նման չեն Խլաթեցու մյուս Գանձարանների և ընդհանրապես ընդօրինակութունների գրչությանը, որը բավականին ինքնատիպութուն ունի և անմիջապես տարբերվում է այլ գրիչների գրածից № 4011 ձեռագրում պահպանվել է հետևյալ հիշատակագրութունը, որը գաղափար օրինակից է գալիս. «Բարխաւսութեամբ սրբոյն Սարգսի զաւրավարին և ամենայն սրբոց նահատակութեամբ, որ աստ կան հաւաքեալ սղորմեա Տէր զձողի սորա Գրիգորի»<sup>25</sup>:

22 է. Հարությունյան, Մխ, Այրիվանեցու Գանձերը Գ. Խլաթեցու խմբագրած Գանձարաններում, «Բանբեր Համալսարանի», № 2, 1977, էջ 229—230:

23 Մատենադարան, ձեռ. № 4884, էջ 70ա—71ա, ստորին լուսանցքում, Հմմտ. Ա. Խաչիկյան, ժԳ դարի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 570:

24 Այդ թվականն է նշված նաև «Որդոց որոտման» գանձի կաֆայում. «Ի վեշտասան յորելինի և չորրորդ երկտասանի»  $(16 \times 50) + (4 \times 12) + 551 = 1399$  (ձեռ. № 4011, էջ 349 բ):

25 Մատենադարան, ձեռ. № 4011, էջ 76ա:

Այնտեղ հիշատակված Գրիգորը Գանձարանի առաջին գրիչ-խմբագիր Խլաթեցին է: Նկատելի է, որ այդ հիշատակագրությունը Գանձարանի բուն գրչության համեմատությամբ ավելի մանր է գրված, այնպես, ինչպես Մխիթար Այրիվանեցու մասին երկու փոքրիկ հիշատակագրությունները:

8. Մեկնութիւն կաթողիկէից քղրոց Սարգսի Շնորհալիոյ. գրիչ Գրիգոր խնդրող բանի, 1400 թ., գրված Ստեփանոս արեղայի համար, «ի գաւառիս Քաջերունույ ի վանս Սուխարայ որ այժմ ասի Խառաքաստայ և այլարանի խեռարարձայ, յառաջնորդութիւն տեր Զաքէոսի եպիսկոպոսի... առ ոտս երջանիկ և բարերարույ, հանդարտ և հըմտավարժ վարդապետի, ամենագով և հանճարեղ, գիտնական, իմաստնական, և արդիւնական, մեծանուն Սարգիս բարունապետի»<sup>26</sup>: Զեռագրի ծաղկողը ներսես պատանին է: Ավարտել է Առջիկ գյուղում, ուր ապաստանել են Լանկ-Քամուրի հրոսակներից հալածված: Զեռագիրն սկսվում է Սարգիս Շնորհալու վարքով և ավարտվում Խլաթեցու արժեքավոր հիշատակարանով<sup>27</sup>: Ունի բազմաթիվ մանր հիշատակագրություններ, արձակ և շափածո, և գովեստի գրվատ՝ նվիրված Աստվածածնին<sup>28</sup>:

Սույն ձեռագրին կից, մեկ կազմի մեջ է ամփոփված Խլաթեցու մի ժողովածուն, գրված 1413 թվականին:

9. Մեկնութիւն Յովհաննու աւետարանի. գրիչ Գրիգոր Խլաթեցի, 1400 թ., վայր՝ Սուխարա վանք, «Արդ ևս վերջինս, և տրուպս ի խնդրողս բանի, Գրիգոր անպիտան կրօնաւոր, ժողովեցի զծաղկաբաղ Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու, ըստ ամենայն աւուր դասու՝ ի լուսաւոր բանից տեառն իմոյ և վարժապետի՝ մեծին Սարգսի կորովամիտ բարունապետի... Եւ արդ՝ եղև հաւաքումն լուսաւոր և պայծառ բանիցս՝ յամի Պեթ (1400) թուականիս... ի վանս Սուխարայ, որ կոչի Խառաքաստայ... յառաջնորդութեան Սուրբ Ուխտիս՝ վերոյ ասացեալ մեծ վարդապետի և տէր Զաքէոսի... եպիսկոպոսի»<sup>29</sup>:

10. Յայտաւարք. գրիչ և խմբագիր Գրիգոր Խլաթեցի, 1401 թ.: Ինքնագիրը մեզ չի հասել, բայց բազմաթիվ ընդօրինակություններ են պահպանվել: «Ի վերջին ժամանակիս, որ էր թուական Հայոցս Պ և Մ (1401) վարդապետումն շնորհալի, Գրիգոր անուն, ի մայրաքաղաքէն Խլաթայ, Մերենց կոչեցեալ, յոյժ կորովամիտ, հանճարեղ և բանիրուն, և անհամեմատ քարտուղար որ է գրագիր... գրեալ և ընթերցեալ բազում անգամ զառաջին կարգեալ սրբոց գիրքս և զի էր կարճաբոտ բանք նոցա: Եւ ինքն ըստ իւրում իմաստութեանն յաւել ի գիրքս յայս բազում շահաւէտ և օգտակար բանս ի հարանց վարուց և ի պատմագրաց... և գովասանութիւնս, է որ յինքենէ և է որ ի Տօնապատճառէ... եղ ի գիրքս և հարստացոյց զսա»<sup>30</sup>:

«Մեծ վարդապետն մեր, քաջ եկլեստիաստէն Հայոց Գրիգոր Մերենց... զարդարեաց լուսափթիթ բուրաստանս, որ գրեաց և հրաման ևտ ամենեցուն նոյնպես գրել»<sup>31</sup>:

<sup>26</sup> Մատենադարան, ձեռ. № 5435 (1—488բ), էջ 471բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 628—629:

<sup>27</sup> Անդ, էջ 481ա:

<sup>28</sup> Անդ, էջ 480բ:

<sup>29</sup> Երուսաղեմ, ձեռ. № 2521, Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 8, Երուսաղեմ, 1977, էջ 194—195:

<sup>30</sup> Մատենադարան, ձեռ. № 4721, էջ 654ա:

<sup>31</sup> Երուսաղեմ, ձեռ. № 1919, էջ 1225 բ, Ն. Պողարյան, Մայր ցուցակ, հ. 6, էջ 372:

11. Աւետարան. գրիչ Գրիգոր վարդապետ, 1402 թ., գրված «ի սուրբ վանս Մատենականի, մերձ Խլաթայ՝ մայրաքաղաք Բզնունեաց գաւառի... ի վայելումն պատանեկին Ընքստակէսի... որ ի մարէն որք մնաց ի տիս համբակին»<sup>32</sup>: Ստացողն է Կարապետ քահանան: Չեռագիրն սկսվում է քսաներեք տերունական նկարներով և տասը խորաններով, որոնց հաջորդում է խորանների մեկնութիւնը: Ապա ավետարանիչներն են և ավետարանառաջները: Յուրաքանչյուր ավետարան վերջանում է ավետարանիչի մասին քառատող ոտանավորով: Ամենավերջում «Գովեստ տացուք» բանաստեղծութիւնն է «Գրիգորի է» նախագծով, որին հաջորդում է բուն հիշատակարանը:

12. Տօնական. գրիչ Գրիգոր Խլաթեցի, 1402—1406 թթ., ստացողներ՝ վանքի առաջնորդներ Հովհաննես և Թոմա եղբայրներ, Ռշտունյաց նկարեն վանքում: Մի շարք ճառեր է մուծել հայ հեղինակներից, կան նաև սեփական ստեղծագործութիւններ: Չեռագիրը այժմ կիսված է երկու հատորների, որոնք պահվում են Մատենադարանում 1520 և 1521 համարների տակ: Այն իր շափսերով բավականին մեծ է եղել, ինչպես ցույց են տալիս կտրված լուսանցազարդերը<sup>33</sup>: Չեռագիրը շն (75) պրակ կամ  $75 \times 12 = 900$  հաստ թերթ է ունեցել, որի պատճառով էլ կիսվել է երկու մասի: Այժմ ձեռագրից պակասում է 45 թերթ: Այդ վիճակով էլ նկարագրվել է Գ. Շահնազարյանի և հրատարակվել Լ. Կարենյանի կողմից, 1863 թ.<sup>34</sup>:

13. Աւետարան. գրիչ Հովհաննես Օրբել, 1302 թ., ստացող Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյան, ծաղկող Մոմիկ: Ավելի քան հարյուր տարի անց, (1406 թ.) Ավետարանը, որից մնացել էր 158 մագաղաթյա թերթ, անցնում է Գրիգոր Խլաթեցու ձեռքը: Վերջինս պահպանելով ձեռագրի թերթերի, սյունակների տառերի շափը, ավելացրել է 144 թերթ և կրկին ամբողջացրել ձեռագիրը, թողնելով այդ մասին մի հիշատակարան, որի սկզբնատառերը հողում են «Գրիգոր վարդապետի է այս»։ Ահա վերջին մասը՝

«Ես անպիտան յամենայնի  
Գրիգոր գծող այսմ տառի,  
Տեսի ղկըտակս ցանկալի՝  
զաւետարանքս Քրիստոսի,  
Ի թուականիս ութհարիւրի  
յիսուն ու հինգ ամ աւելի (1406),  
էտո՛ քաջալերս իմ սրբախ  
աշխատութեամբ զըծագրեցի:  
Աւետարանս էր այս թերի  
միայն Յոհան էր ի կարգի,  
Յերից ղլիոց սակաւ ունի  
զսկիզբն և զաւարտն ի պատշաճի:

<sup>32</sup> «Բանասեր», Փարիզ, 1905, № 4, էջ 97—100: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Գ, էջ 308—309:

<sup>33</sup> Մատենադարան, ձև. № 1520, 1521: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 48: Չեռագրի մասին մանրամասն տե՛ս Ա. Մարեոսյան, Չեռագրական մանր սրբագրութիւններ հողվածք, «Էջմիածին», 1968, № Ե, էջ 50—64:

<sup>34</sup> «Մայր ցուցակ», ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի: Տպագրեալ հրամանաւ տեառն Մատթէոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց: Մխիտր ի Կարենոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարենեանց, յօգուտ զպրոցի ժառանգաւորաց սրբոյ Էջմիածնի, Թիֆլիս, 1863, № 915, 914:



Սակս որոյ հոգս ինձ արարի,  
 և յաւժար կամար զթերին լցի»<sup>35</sup>:

14. Գանձարան. Խլաթեցու ինքնագիրն է և ծաղկածը<sup>36</sup>: Պակասավոր է «կզբից և վերջից, շունի հիշատակարան և ոչ մի տեղ չի պահպանվել գրչի սանունը: Այս ձեռագրի համեմատությունը Մատենադարանի № 4011 և 3540 Գանձարանների հետ (վերջինս գրված է 1408 թ. Յիպնավանքում, Հովհաննես գրչի ձեռքով. «առ ոտս գերիմաստ և երանաշնորհ և արդիւնական հոետորիս Գրիգոր վարդապետի»)»<sup>37</sup> ցույց է տալիս, որ այն ավելի մոտ է երկրորդին: Վերնագրերում, որտեղ Խլաթեցու ինքնագրում գրված է «ի գծողէս», այստեղ Հովհաննես գրչի մատ փոխված է «ի Գրիգոր վարդապետէ» ձևով:

Խլաթեցու ձեռագրի վերջում Զարարիա Աղթամարցի կաթողիկոսի նահատակության անթիվ, 1393 թ. գրված ողբը վերնագրված է «Ողբ ի գծողէս Գրիգորի»<sup>38</sup>, իսկ № 3540 ձեռագրում՝ «Ողբ նորին Գրիգորի վարդապետի ասացեալ»: Օրինակները բազմաթիվ են: Ուրեմն Մատենադարանի № 6851 ձեռագրի գրիչը Գրիգոր Խլաթեցին է, վայրը՝ Յիպնավանքը, իսկ գրության ժամանակը՝ մինչև 1408 թվականը:

15. Տոնական. գրիչ Գրիգոր, որդի Մերի և Խոյանդի, ստացող՝ Հովհաննես արեղա և Հովհաննես փիլիսոփա եղբայրներ: Որպես սրանց մտերիմ և աշակերտ հիշվում է նաև Առաքելը՝ նկարենա վանքի հայրպետը: Այդ վանքում է գրվել նաև նախորդ մեծ Տոնականը (№ 12):

Համեմատությունից երևում է, որ այս ձեռագիրը նախորդի համառոտումն է, այն այդպես էլ կոչվում է «տանականաձագ»<sup>39</sup>: Ձեռագիրը թյուրիմացաբար ժԶ դարի ընդօրինակություն է համարվել<sup>40</sup>: Այն գրվել է մինչև 1425 թվականը, 1406 թ. հետո:

16. Յայսմաուրեֆ. նախորդ ձեռագրի հիշատակագրություններից մի քանիսում կարդում ենք «Ողորմի Քրիստոս Աստուած մեր ստացողի գրոցս Յոհաննէս սրբազան արեղային, որ ստացաւ զայս գիրքս և Բ (2) գիրք այլ՝ Տարեգիրք մի և Յայսմաուրք մի յիշատակ եղբարն իւրոյ Յովհաննէս փիլիսոփային տարածամ գնացելոյն առ Քրիստոս»<sup>41</sup> կամ՝ «որ ստացաւ զայս գիրքս և Բ՝ Յայսմաուրք և Տարեգիրք մի ի միում ամի»<sup>42</sup>: Հավանաբար նրա համար Խլաթեցին է ընդօրինակել, այլապես մի քանի անգամ չէր հիշատակի:

17. Տարեգիրք. Տե՛ս նախորդ (№ 16) ձեռագիրը<sup>43</sup>:

18. Գանձարան. գրիչ Գրիգոր վարդապետ, ստացող՝ Թումա: Միագույն

35 Մատենադարան, ձեռ. № 6792, էջ 247բ, 248ա: Ձեռագրի 11ա էջում կարդում ենք «...ի յամի ԳԿ (1411) թրվականիս Հայոց... ևս Գրիգոր վարդապետս ձախեցի զԱւետարանս Յոհաննէս խաչպան երիցուն, որ այլ ումէք զաւի շկայ ի հետ»: Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԳ դարի հիշատակարաններ, էջ 8—10:

36 Նույն տեղում, ձեռ. № 6851:

37 Նույն տեղում, ձեռ. № 3540, էջ 257բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ժԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 92:

38 Նույն տեղում, ձեռ. № 6851, էջ 283բ:

39 Նույն տեղում, ձեռ. № 4774, էջ 247բ:

40 «Յուցակ ձեռագրաց Մատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, էջ 1283:

41 Մատենադարան, ձեռ. № 4774, էջ 129բ:

42 Անդ, էջ 176բ:

43 Անդ, էջ 129բ, 176բ:

գլխազարդերով, լուսանցազարդերով ու զարդագրերով նկարազարդված մատյանը գրվել է «ի վանս Յիսնայ... յամս թագաւորութեան ազգին նետողաց Ղարա-Ուսուֆին և որդոց նորին»<sup>44</sup>։ Լ. Ս. Խաչիկյանը նկատի ունենալով, որ 1408 թ. Հովհաննէս գրչի նույն վանքում արտագրված Գանձարանը<sup>45</sup> և նրա հիշատակարանը արտագրված է սույն օրինակից, գրութեան թվականը նշանակում է 1408-ը<sup>46</sup>։ Սույն ձեռագիրը հավանաբար գրվել է 1408 թ. հետո։ Չեռագրի «հիշատակարանում մանրամասնորեն խոսվում է ժողովածուի նպատակների ու կազմութեան պարագաների մասին։ Ուստի հնարավոր է ենթադրել, որ այս հիշատակարանը հենց Գրիգոր Խլաթեցու «Գանձարանի» ինքնագիր օրինակի հիշատակարանն է, — գրում է Լ. Խաչիկյանը, — սակայն կարելի է կարծել, որ վերոհիշյալ անձինք խնդրել են Գր. Խլաթեցուն, ընդօրինակել արդեն գոյութիւն ունեցող և ճանաչված ժողովածուն, նրա խմբագրումից տարիներ հետո։ Անկասկած է, սակայն, որ այս հիշատակարանը գրվել է Ղարա Յուսուֆի և նրա որդիների իշխանութեան ժամանակ («յամս թագաւորութեան նետողաց Ղարա-Ուսուֆին և որդոց նորին»), ուրեմն 1408—1420 թ. միջոցին»<sup>47</sup>։

19. Ժողովածու. գրիչ Գրիգոր վարդապետ, 1409 թ.։ Չեռագիրը երեք տարբեր ժամանակների ընդօրինակություն է։ Չեռքի տակ ունենալով 12 և 13 դարերի երկու տարբեր ձեռագրեր, Խլաթեցին լրացնելով ու ամբողջացնելով, կցել է իր ժողովածուին<sup>48</sup>, որը պարունակում է Հովհաննէս Երզնկացու, Հովհաննէս Գառնեցու, Եփրեմ Ասորու, Վարդան վարդապետի, Հովհաննէս Ոսկերեհանի, Հովհաննէս Մանդակունու և այլոց խրատներն ու ճառերը։ 127-րդ թերթից սկսվում է հին, XIII դարի գրութեամբ ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», որից ընկած մի քանի թերթերը լրացրել է Խլաթեցին։ 177—220 թերթերը պարունակում են Խլաթեցու «Համառատ մեկնութիւն արարածոց գրոցն, հաւաքեալ ի մեկնութենէն Վարդանայ վարդապետի» աշխատությունը, որն ինչպես երևում է, նա կատարել է 1409 թ. և վերստին ընդօրինակել 1413 թ.։ Սրանց համեմատությունը պարզում է Խլաթեցու՝ որպես գրչի և գիտնականի աշխատանքի հետաքրքրական շատ կողմեր (որոնց կանգրադառնանք առանձին)։ Ժողովածուին կցված երրորդ, ավելի հին ձեռագիրը՝ ճառերի ժողովածու է։ Այն միասյուն է՝ գրված բոլորգրով, տառերն այնքան են գունաթափվել և փնասվել ջրից, որ Խլաթեցին դրանց մի մասի վրայով թանաքով կրկին անցել, թարմացրել է և հետո՝ ընդօրինակել 1413 թ. ժողովածուում։ Խլաթեցին ճառերի այս ժողովածուն պարզապես փրկել է, հնացած, քայքայված և կորստի գատապարտված մասերը նորոգելով և վերստին ընդօրինակելով։

20. Ժողովածու. գրիչ Գրիգոր պիտակ անուն խնդրող բանի, 1413 թ., «Կաթողիկէից թղթոց» հետ (484ա էջից մինչև 584 բ) մի կազմի մեջ է ամ-

44 Մատենադարան, ձեռ. № 5328, էջ 289բ։ Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա., էջ 91։

45 Մատենադարան, ձեռ. № 3540։

46 Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա., Երևան, 1955 թ., էջ 90, ձթ. 1։

47 Նույն տեղում։

48 Մատենադարան, ձեռ. № 2783, էջ 32ա, Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դ. հիշատակարաններ, մ. Ա., էջ 99։

փոփոխված, հավանաբար այդ թվականին<sup>49</sup>: Պարունակում է վարդան Արևելցու Արարածոց մեկնությունը՝ «Համառատ մեկնութիւն գրոցն արարածոց՝ հաւաքեալ ի մեկնութենէն վարդանայ վարդապետի՝ առն հոգելի և իմաստոյ, աշխատութեամբ Գրիգորի անմտի և մեղապարտի» վերնագրով: Մրկուական ճառ եփրեմ Ասորու և Փիլիքսիանոս եպիսկոպոսից, որի վերջում պահպանվել է 1187 թ. թարգմանության հիշատակարանը<sup>50</sup>, այնուհետև «խաւք իմաստասիրաց և ուղղափառ վարդապետաց՝ ասացեալ վասն զազանաց և սողնոց և ոչք ի նոսա սահմանեալ կան, բարք և բնութիւնք յաղագս արինակի արդարոց և մեղատորաց և այլոց բանից»<sup>51</sup> և այլ նյութեր:

21. Մատեան ողբերգութեան Գրիգորի նարեկացոյ. յուրաքանչյուր «բան»-ից հետո համապատասխան մեկնությամբ: Նաև շափածո գովք նվիրված նարեկացուն: Մեզ է հասել Մատենադարանի № 622 (գրված 1629 թ.), № 1573 (Ժէ դ.), № 4989 (1681 թ.), № 6733 (Ժէ դ.) ձեռագրերում, տարբեր գրիչների ընդօրինակությամբ: № 1573 ձեռագրում, նարեկացու վարքից հետո կարմիր երկաթագրով գրված է ՊԿԲ (1413), իսկ № 4989 ձեռագրում նույն տեղում թվականի փոխարեն գրված է «Ասացեալ Գրիգորի վարդապետէ Խլաթեցո՝ Մերենց կոչեցեալ»<sup>52</sup>: Այնուհետև գովքն է, որի սկզբնատառերը հոգում են «Գրիգորի է այս բանքս թողուլ զմեղս»: Սրանից բացի, որոշ ձեռագրերի սկզբում, մատչանի և նրա հեղինակի մասին կա հանելուկ (Ն. Շնորհալու հանելուկների շարքում): Բերում ենք դրանք:

ա

«Գոյր ոմն ընտիր հայկազանց  
 ի գաւառէն Ըորշտունեաց  
 Բարուն բարի ճոթ վկայած  
 անհամեմատ վարդապետաց.  
 Իմաստութեամբ յոյժ գերապանձ  
 բանիւ պայծառ և գերազանց  
 Գրքով սրբոց էր նա վարժած  
 իմաստութեամբ հոգոյն լցած  
 Որպէս զարեւն ի յաստեղաց  
 էր նա ի մէջ վարդապետաց  
 Բամից հանուրց հոնտորաց  
 և բանիրուն գիտնականաց  
 Ի հայոց էր նա ծընած  
 որ յայլ ազգեաց ենք յետս անկած  
 էր գերագույն նա և յունաց  
 աստուածարան վարդապետաց,  
 Եւ արտաքնոց հոմերոսաց,  
 այն պերճարան պիթագորեանց»<sup>53</sup>:

49 Մատենադարան, ձեռ. № 5435, էջ 556ա, հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 156:

50 Անդ, էջ 527ա, 539:

51 Անդ, էջ 539:

52 Մատենադարան, ձեռ. № 4989, էջ 309բ: Հմմտ. Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 156:

53 Մատենադարան, ձեռ. № 6733, 6ա: Սկզբնատառերը հոգում են «Գրիգորի է»:

## Բ

«Ոմն ի երկրէն Ղոշաունեաց  
էր յոյժ փարթամ յամեն բարեաց  
նա բարելի սեղան կազմեաց  
Ջամենեւեան ի հաշ կոշեաց  
Ող յայն հացէն աղասամբեաց  
Ինքն հաւիտեան բաղցած մնաց»<sup>54</sup>:

22. Յանախապատում հառֆ. գրիչ Գրիգոր Մերենց, 1415 թ., վայր Երուսաղէմ, ստացող՝ Մկրտիչ Մեծոփեցի: Այդ առթիվ գրում է «եւ արդ գրեցաւ սա յաստուածակոխ բաղարս յԵրուսաղէմ, ի վանս սուրբ Յակոբայ... ձեռամբ յորնամեղ և անարհեստ գրչի՝

«Գրիգորի մեղապարտի,  
Պիտականուն վարդապետի,  
նր ցանկանայ այս[մ] տառի՝  
Գրոց մերոյս լուսաւորչի,  
նր ի վաղուց փափազէի  
եւ որոնեալ շատանէի,  
Մինչ որ յԵրուսաղէմ եկի  
եւ աստ գրտի, զոր ցանկայի,  
Տոր ձեռնարկեալ իմ և գրեցի  
Ձայս լուսատու բանքս ի բարտի»<sup>55</sup>:

Յանախապատումից հետո տպագրվում է Վարդան վարդապետի վեց հանրը Գրիգոր լուսավորչի, նրա որդիների, հետին թոռների և հետնորդների, ինչպես նաև Սահակի, Մեսրոպի և մյուս թարգմանիչների մասին<sup>56</sup>:

1418 թ. Մկրտիչ Մեծոփեցին նույնաչափ թղթերի վրա գրում է Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» և խլաթեցու ձեռագրի հետ միասին կազմում:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 7ա: Վերջում կա նաև մի ոտանավոր, որի սկզբնատառերը հոգում են «Գրիգորի է»:

«Գոյս է շնչին սակաւատր,  
արդշունքն մեծ և զորատր,  
Բամեալ բանիւ յոյժ փառատր,  
գիտուն մտաց է բղծատր:  
Իմաստութեամբ խորհրդատր  
եւ հանճարեղ բան լուսատր,  
Գրբեալ ի պէտս հոգեւոր  
բանասիրաց բան շահատր,  
նրբ միտ գնեն բանիս բոլոր,  
պաղարբերեն յոյժ բեղմնատր,  
Բոտեալ սիրով արգասատր  
բզղծողս յիշեն՝ գիտ Գրիգոր,  
Ի հանդիսի տօն խմբատր,  
սրբոց արանց պսակատր,  
էին բանի հօրն երկնատր  
փառս տացուք մեր բանատր»:

<sup>55</sup> Մատենադարան, ձեռ. № 8775, էջ 220ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, ժն գարի հիշատակաբաններ, մ. Գ, էջ 338—339:

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 221ա—315ա:

23. Աւետարան. գրիչ Գրիգոր վարդապետ, 1419 թ., վաչր Յիսկնա վանք: Ձեռագրի սկզբում բերված են ներսես Շնորհալու «Պատճառ ժ խորանաց սրբոց Աւետարանիս և վասն երանկ ոանկ գունոց ծաղկանց և հաւուցն ու ծառոցն»<sup>57</sup> և «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց աւետարանիս»<sup>58</sup> մեկնությունները և վերջում պարզաբանում մեկնությունների ստեղծման պատճառը: Խորագրերում Խլաթեցին սխալվել է: Առաջինը Ստեփանոս Սյունեցու մեկնությունն է, երկրորդը՝ վարդան Արևելցու: Ձեռագրի ծաղկողը նույնպես Խլաթեցին է: Ձեռագիրն ավարտվում է մատյանի հետագա ժառանգողներին ուղղված խրատով, որն ունի այսպիսի վերնագիր՝ «Խաւսք և պատուեր սուրբ գրոցս, առ այնոսիկ որ ժառանգեն զսա յապայս ժամանակաց վասն զգուշութեան»:

24. Գանձարան. արտագրված է Գրիգոր Խլաթեցու օրինակից, որի կաֆաներից մեկի մեջ հիշված է 1418 թվականը:

«Գանձ Յովնանու զխաւաման  
Գանձս ասէ զկաֆայս  
Գանձս գրեցայ ևս պիտանի  
Բոտեալ բանիս ախորժելի,  
Ի Գրիգորէ գարչ աղտելի,  
Գրեալ սրբոյն Կարապետի,  
Երդոյն սուրբ Զարարիայի,  
Բամից փրկչին մըկրտողի,  
Ի տասն և յեաթն յոբելին[ի]  
է և տասին թիւ աւելին (1418)  
Բանքս գրեցաւ այս գովելի,  
Այն Յովնանու Կարապետին,  
Նախամեծար սրբոց դասին»<sup>59</sup>:

Խլաթեցին սովորություն ուներ Գանձարաններում գլխավոր հիշատակարանից դատ, թվականը հիշել նաև ձեռագիրը ընդօրինակելու ժամանակ գրված կաֆաներից մեկում, ինչպես 1399—1400 թ. խմբագրված Գանձարանում (ձեռ. № 4011): Մեր կարծիքով այս թվականը այն գանձարանի գրության թվականն է, որը գաղափար օրինակ է ծառայել Մատենադարանի № 4200 ձեռագրի համար:

25. Ճաշոց. Կարապետ գրիչը, 1421 թ., Աղեթում հյուան Հովհաննեսի համար ընդօրինակում է Ճաշոցը:

Կարապետի հետ որոշ էջեր (238բ—272ա, 286բ—288ա—295բ—301ա և այլն) ընդօրինակել և հիշատակարանը (գրչի անունից) ինչպես նաև վերջի շափածո մասը (սկսվում է «Իսկ ի յամի ութ հարիւրին» և կազմում է «Յիշատակարան աղետից» ողբի վերջին մասը) շարադրել ու գրել է Գրիգոր Խլաթեցին. ինչպես երևում է գրչությունից<sup>60</sup>:

57 Մատենադարան, ձեռ. № 3714, էջ 1ա: Այս ձեռագրից են արտագրված Մատենադարանի № 7772 և № 9432 ձեռագրերը նրա աշակերտ Աստվածատուրի կողմից, որը պահպանել է և խորանների մասին մեկնությունները, և նկարաշարը, և վերջին խրատը: Մեկնությունների վերջում Խլաթեցու «պատճառը» բուն ձեռագրում թերի է, թերթ ընկնելու պատճառով, իսկ այստեղ լրիվ:

58 նույն տեղում, էջ 2ա:

59 Մատենադարան, ձեռ. № 4200, էջ 252ա:

60 Մատենադարան, ձեռ. № 4522, էջ 431բ:

26. Գանձարան. Մատենադարանի № 5798 ձեռագիրը 1462 թ. ընդօրինակված է Գրիգոր Խլաթեցու 1422 թ. գրված Գանձարանից, որն ավարտվել է «Յիշատակարան աղէտից» նշանավոր ողբով: Այն պահպանվել է նաև Կարապետի ձեռագրում հետևյալ վերնագրով. «Յիշատակարան աղէտից ի ժամանակիս մերում, զոր ասացեալ է Գրիգոր վարդապետի, որ մականունն Մերենց կոչի, Խլաթեցի»<sup>61</sup>:

Այսպիսով, Խլաթեցու խմբագրության մեզ հայտնի վեց գանձարաններից երեքը ինքնագիր են, երեքը՝ ինքնագրերից արտագրված:

27. Յիսուս որդի Ներսիսի Շնորհալիոյ. գրիչ Գրիգոր Խլաթեցի, 1423 թ.: Հայտնի չէ ձեռագրի ճակատագիրը: Այն գրվելուց անմիջապես հետո կազմվել է Գրիգոր Նարեկացու «Մատենի» հետ, որն այժմ պահպանվում է Մատենադարանում և կրում 7019 համարը: Սկզբում եղել է Մատչանը, վերջում՝ Յիսուս որդին:

Ձեռագրի 164ա էջում կարդում ենք. «1801 թ. սեպտեմբերի 16-ին Վանայ հեծեալն գնաց ի Մահմուտի ի վերայ Աւտի աղին, նա փախեալ գնաց Խոչ, գիւր (իմա՝ գոյր) նորին աւարի և թախթան արարին: Զայս հրաշալի սուրբ նարեկս անկեալ էր ի ձեռս այլազգի միոյ...»

Հէքիմպաշոնց Մահդասի Աահակ աղային ի գութ շարժեալ մեծի, էառ իւր հալալ արդեանց, որ էին գրեալ Բ(2) գիրք ի միասին կազմեալ էին, յոյժ թանձր էր եղեալ, որ էր մէկ Յիսուս որդի՝ զոյգ ընդ նարեկիս: Վասն որոյ թվին ՌՄՄԸ (1809) նոյեմբերի Ա. (1) վերստին Լտուր մեկնել ի միմիանց յատուկ-յատուկ՝ Լտ նորոգել վասն փոքր լինելոյ: Բայց յիշատակարանս ի վերջն Յիսուս որդոյն էր գրած, ի մեկնելն միմիանց՝ մնաց նարեկն առանց յիշատակարան: Եւ Լս մեղօք մածեալ Կարապետս բերանով նորին գրեալ եմք...»:

«Յամի թուականութեանս Հայոց ՊԶԲ (1423) գրեցաւ գիրքս այս աղօթական Լոամեծին սրբոյն Գրիգորի Նարեկացոյն և վանից վանականի և Հայոց փիլիսոփայի: Գրեցաւ ձեռամբ Եզնկացոյ, և Գրիգորի Խլաթեցոյ, և իմովս մեղապարտի տխրիժ մատամբս, և յևտինս ի բանասիրաց և տրուպս ի բանաստեղծաց, և ի խնդրողաց բանին Յիսուսի հսկող անուանեալ հոմանուն Գրիգորի...»<sup>62</sup>:

Մատչանի գրությունը Գրիգոր Խլաթեցունը չէ, ուրեմն Երզնկացունն է: Ձեռագրի վերջին 14 էջերն են Խլաթեցունը, ինչպես երևում է գրությունից, և նրան հաջորդող ներսես Շնորհալու Յիսուս որդին պոեմը, որն անշատվել և առանձին կազմվել է:

28. Փամագիրք, սաղմոսաբան, տօնացույց. ձեռագրի մասին իմանում ենք 1620 թ. ընդօրինակությունից (գրիչ՝ Ստեփանոս քահանա, վայր՝ Վան, ստացող՝ Գէորգ Լախսկոպոս), որի հիշատակարանում կարդում ենք. «...Իսկ Լս

61 Որոշ հատվածներ հրատարակվել է Ղ. Փիրղալեմյանի «Նօտարք Հայոցում» (Կ. Պոլիս, էջ 5, 36, 47): Ամբողջական հրատարակվել է «Ազրյուր» ամսագրում, Քիֆլիս, 1889, № 11, էջ 127—133, Արխատակես Լալ. Սեղրակյանի կողմից, Ղ. Ալիշանի «Հայապատումի» Բ հատորում, Վենետիկ, 1901, էջ 563—568: 1897 թ. Գ. Խալաթյանցը հրատարակեց «Աբարատում», Վաղարշապատ, 1897, իսկ 1959 թ. Լ. Խաչիկյանը հրատարակեց համեմատական քննարկը երեք ձեռագրերի համեմատությամբ (Ժն դարի հիշ., մ. Ա, էջ 272—286):

62 Մատենադարան, ձեռ. № 7019, էջ 164ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, Ժն դարի հիշատակարաններ, մ. Ա, էջ 311:

եպիսկոպոսս Գէորգ ծառայ ծառայիցդ Աստուծոյ ի բազում տենչամբ տոչորեալ էի ի սէր ուղղաբան Սաղմոսարանիս ատենի, ահա հանդիպեցայ լաւ և ընտիր արինակէ Մերենց Գրիգորի, որ բազում ճգամբ և ջերմեռանդ սրտիւ Լատու գրել...»<sup>63</sup>: Մարգիս աշխարհականը 1629 թ. Խոտածան գյուղում ընդօրինակում է մի Սաղմոսարան «յընտիր և լաւ արինակէ Մերենց կոչեցեալ»<sup>64</sup>: Հավանաբար նույն դորժը նկատի ունի:

29. Ասագ Մաշտոց. Մեզ է հասել Թումա Աղթամարցու 1499 թ. Աղթամարում կատարած ընդօրինակութեամբ. «Բազում աշխատանօք գծագրեցի զսա ի ստույգ և յընտիր արինակէ, զոր սրբագրեաց և փարթամացոյց մեծ հոհտորն Գրիգոր վարդապետն քաջ և արին»<sup>65</sup>:

Ձեռագրում պահպանված են Գրիգոր Խլաթեցու մի քանի գանձեր («Գանձ արհնելոյ», «Գանձ ձեռնադրութեան» և այլն):

Այդ նույն օրինակից կիմ անապատում 1530 թ. Ռստակես Աղթամարցին արտագրում է Մաշտոց, ուր կա նաև մի «Շարական ի Մերենց շնորհալի վարդապետէն Գրիգորոյ վասն տնտես արհնելոյ» նաև «Գանձ ձեռնադրութեան քահանայից ի Մերենց Գրիգորէ վարդապետէ Խլաթեցոյ», իսկ վերջում մի ոտանավոր, որ գտնվում է նաև «Նարեկի»՝ Խլաթեցու ընդօրինակութեան մեջ<sup>66</sup> «Գոյս է շընչին սակաւաւոր» սկսվածքով, որի սկզբնատողերը հոգում են «Գրիգորի է»<sup>67</sup>:

30. «Պատմութիւն գերից ժամանակաց ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատուութիւնս». այս տեղեկության միակ վկայությունը Թովմա Մեծոփեցու Պատմութիւնն է<sup>68</sup>: Երկը հայտնաբերելու ուղղութեամբ մեր որոնումները առայժմ արդյունք չեն տվել:

31. «Գրիգոր Մերենց Խլաթեցին զէ(7) անուր արաւշուրեանն գրեաց յայսմ վայրի»<sup>69</sup>:

32. Մատենադարանի № 1981 ձեռագրի 92ա—100ա էջերը Գրիգոր Խլաթեցու գրութեամբ ավելացրած թերթեր են<sup>70</sup>:

Ահա այն ձեռագրերը, որ մեզ հայտնի են Գրիգոր Խլաթեցուց, որոնցից մի քանիսը նրա խմբագրություններն ու մեկնություններն են, մյուս մասը՝

63 Մատենադարան, ձեռ. № 4927, էջ 354ա:

64 Բ. Կյուլիսեբյան, Ցուցակ ձեռագրաց Անկիւրոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիզիաս, 1957, էջ 1215: Հավանաբար Մերենցի օրինակը պահվել է Մեծոփա վանքում, ինչպես երևում է 1620 թ. արտագրված մի Սաղմոսարանի հիշատակարանից «եւ երթեալ հասեալ մեծահոշակ վանքն Մեծոփ և մտեալ ի սրբատունն [Լատու] Սաղմոսարան մի որ Մերոց (Մերենց—Ս. Մ.) կոչին»: Հմմտ. Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Փէ դար, հ. Ա, Երևան, 1974, էջ 734:

65 Մատենադարան, ձեռ. № 6326, էջ 406ա: Հմմտ. Լ. Խաչիկյան, Փե դարի հիշատակարաններ, մ. Գ, էջ 284:

66 Տե՛ս աստ, էջ 21:

67 Ն. Պողոսյան, Մայր Ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 143—147:

68 Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 42:

69 Գրված է Մերենցի՝ Հայտնավորքից արված ընդօրինակության վերջում: (Ա. Սյուրմեյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Հալեպի...», Երուսաղեմ, 1935, էջ 292):

70 Պարունակում են 92ա «Առաջել Երիցու բանիբուն և շնորհալից քահանայի ասացեալ բան քաղցրաշատ ի նախահայրն մեք...», 98բ «Թովասանութիւն գրոցն այրուրենի», 100ա «Ախթարք»:

ընդօրինակությունները, որոնց մեջ պահպանվել են հեղինակի շափածո և արձակ ստեղծագործությունները, պատմությունները, վարքերը և վկայաբանությունները, հարյուրից ավելի գանձեր, տաղեր, մեղեդիներ, ներբողներ, մանրերկեր, հիշատակարաններ և հիշատակագրություններ՝ պատմագրական հրակայական տեղեկություններով:

Մրանց պետք է ավելացնել նաև այլևայլ ժողովածուներում հանդիպող նամակները, հարցմունքների պատասխաններն ու հանելուկները: Գրանք են. ա. «Էտապատան Գրիգոր Մերենց վարդապետի»<sup>71</sup>:

բ. «Խրատի ժամակարգութեանց, աղօթից և ճերարութեանց հասարակաց յանձնառութեան և առանձնութեան ի Գրիգոր վարդապետէ»<sup>72</sup>:

գ. «Խրատի ժամատեղեաց քստ Արևելեան սահմանացն սկսուածոց և ասութեան աղօթից, զոր խնդրեալ սուրբ վարդապետն Յակոբ Աբիմեցի ի բարունոյն Գրիգորի Խլաթեցոյ»<sup>73</sup>:

դ. «Թուղթ», որոնք տեղափոխված են Թովմա Մեծոփեցու հավաքած նամակների ժողովածուում, որի վերնագիրն է «Թուղթ նամակի վարդապետաց: Եկեղեցոց, զոր ի կեանս իմ գտի՝ ես պիտականուն վարդապետ Թովմա, աստ հաւարեցի վասն գրոց աշակերտի»:

Զեռագիրը հետագա ընդօրինակությամբ պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում<sup>74</sup>:

ե. «Հանելուկի ի Գրիգոր վարդապետէ Մերենց»<sup>75</sup>:

Այս է Գրիգոր Խլաթեցուց մեղ հասած ձեռագրական ժառանգության պատկերը, որոնց (ինչպես նաև հիշատակարաններին) կանդրադառնանք առանձին-առանձին:

«Ոչ միայն գրասիրության այլև ուսումնասիրության մի տիպար է եղել այս վարդապետը»<sup>76</sup>,— գրում է Մանուկ Արևելյանը Գրիգոր Խլաթեցու մասին: Խլաթեցին գրչության արվեստի ուսուցիչ էր Խառաքստա վանքում, գրչապետ, գեղեցկագիր: Հաճախ է հիշում հիշատակարաններում, որ ձեռագիրը ավարտել է առանց գրչափոխության, որ վարպետության նշան էր<sup>77</sup>:

«Ինքն գիտէ Տէրն կայուն.

Որ ի յայրէն մինչև ի նուն,

Ոչ է կորած գրիչս ի բուն»:

Այստեղ նշված են Ավետարանի սկզբի և վերջի տառերը, այսինքն «Աւետարան» բառի առաջին և «ամէն» բառի վերջին տառերը: Նշանակում է, ամբողջ ձեռագիրը գրել է նույն գրչով, որը երբեք չի սրել: Նա էր զարդարում իր ընդօրինակությունները զարդագրերով, լուսանցազարդերով, գլխազարդերով և տերունական նկարներով:

71 Մատենադարան, ձեռ. № 8076, էջ 74ր:

72 Նույն տեղում, ձեռ. № 5128, էջ 245ա:

73 Մատենադարան, ձեռ. № 9244, էջ 139ա:

74 Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, № 92: Նույնի մանրածագավենը, Մատենադարան № 377: Հմմտ. Ս. Մարարյան, Գրիգոր Խլաթեցու նամակները, «Լրարեր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1978, № 5:

75 Ա. Մնացականյան, Հայ Միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980, էջ 381—387:

76 Մ. Արևելյան, Երկեր, հ. 4, Երևան, 1970, էջ 409:

77 Լ. Խաչիկյան, ԺԳ գրքի հիշատակարաններ, էջ 601:



Գրիգոր Խլաթեցին հմուտ գրիչ լինելուց բացի նաև ծաղկող էր: Նա ինքն է նկարագարել իր ընդօրինակած ձեռագրերից շատերը, շնայած այդ մասին որևէ հիշատակություն չի արել: Եթե Խլաթեցու ընդօրինակությունների ծաղկողը այլ անձնավորություն է լինում, ապա հիշատակարանում անպատճառ նշվում է նրա անունը: Իսկ երբ այդ բացակայում է, մանավանդ երբ նկարների բացատրություններն ու բնագրի ձեռագիրը նույնն են, այդ դեպքում կասկած չի մնում, որ գրիչը և ծաղկողը Խլաթեցին է:

Գրիգոր Խլաթեցու ինքնագրով մեզ հասած Մատենադարանի № 1520 ճառընտիրում 49-րդ պրակի «Երանելույն Եփրեմի խորին Ասորույն ասացեալ ի գալուստն Քրիստոսի բառասնարեալ ի տաճարին չրնծայումն» ճառի դիմաց, լուսանցքում նկարված է մի գեղեցիկ տաճար և ստորին լուսանցքում գրչի ձեռքով գրված. «Այս արարի, որ թիւն ի ՊՄԵ էր: Տաւնս, ի յայս տեղս եղաք»<sup>78</sup>: Այս փաստն ուղղակիորեն ասացուցում է, որ Խլաթեցին նաև ձեռագրի մանրանկարիչն է:

Լինելով բազմակողմանիորեն զարգացած մարդ և գրչության արվեստին կատարելապես տիրապետող գրիչ, Խլաթեցին իր ընդօրինակած ձեռագրերում կատարել է և թեմատիկ նկարներ, գլխազարդեր, լուսանցազարդեր և զարդագրություններ<sup>79</sup>:

Գրիգոր Խլաթեցին նաև նշանավոր երաժիշտ էր: Իր գանձերից շատերը ինքն է խաղաղրել, ձայնաղրել և երգել քաղցրաձայն, ինչպես վկայում են ինքնաստեղծ գանձերը, տաղերը, մեղեդիները և հիշատակարանները:

Գրիգոր Խլաթեցու մանրանկարչական, ինչպես նաև երաժշտական ժառանգությունը արժանի է մասնագիտական մանրակրկիտ ուսումնասիրության:

С. Т. МАРАБЯН

## РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ ГРИГОРА ХЛАТЕЦИ

### Резюме

В статье представляется рукописное наследие одного из крупных представителей средневековой армянской культуры, писателя, поэта, педагога, писца, художника, религиозного деятеля Григора Хлатеци (1349—1425). Хлатеци занимался рукописным делом около шести десятилетий, с восемнадцатилетнего возраста до «дня мученичества» и писал «летом и зимой», осенью и весной, днем и ночью, дома и вне его, в монастыре, в деревне и в городе.

В рукописном наследии Григора Хлатеци насчитываются 32 рукописи, хранящиеся в Матенадаране им. Маштоца и других армянских рукописных собраниях. Среди них имеются как автографы, так и последующие копии. В целях восстановления колоссальных рукописных потерь, возникших в результате походов Тамерлана, Хлатеци не толь-

<sup>78</sup> Մատենադարան, ձեռ. № 1520, էջ 131ր: Հմմտ. Ա. Մարեաշյան, Ձեռագրագիտական սրբագրություններ, էջ 60:

<sup>79</sup> Զ. Հակոբյան, Գրիգոր վարդապետ Խլաթեցին (Ծերենց) մանրանկարիչ, «Էջմիածին», № 5, 1975:

ко сам переписывал, но и побуждал других делать то же самое. Он разыскивал и размножал редкостные рукописные образцы.

В перечне рукописей Хлатеци мы встречаемся не только с обыкновенными списками, такими как Евангелие, Чашоц, Маштоц и т. д., но и с редакциями церковно-ритуальных сборников, выполненных им самим, например Четы-Миней, праздничный лекционарий, Гандзаран, а также с собственными толкованиями евангелия от Иоанна и сокращением толкования Пятикнижия, принадлежавшим перу Вардана Арвелци; собственные произведения—«Повествование о трех временах в вопросах и ответах» и др.

S. T. MARABIAN

## L'HERITAGE MANUSCRIT DE GRIGOR KHLATETSI

### Résumé

L'article présente l'héritage manuscrit de l'un des représentants éminents de la culture arménienne, médiévale, Grigor Khlatétsi (1349—1425), écrivain, poète, pédagogue, peintre, homme d'Eglise. Khlatétsi a consacré environ six décennies de sa vie au métier de scribe, de l'âge de dix-huit ans jusqu'au "jour de son martyr"; il a écrit "en hiver et en été, en automne et au printemps, le jour et la nuit, à la maison et dehors, au monastère, à la campagne et en ville".

L'héritage manuscrit de Grigor Khlatétsi compte trente-deux manuscrits conservés au Maténadaran Machtotz et dans les autres collections de manuscrits arméniens. Certains de ces ouvrages sont autographes, d'autres des copies d'oeuvres antérieures. Dans le but de compenser les énormes pertes de manuscrits ayant résulté de l'invasion de Tamerlan, Khlatétsi, non content de copier lui-même, encourageait les autres à suivre son exemple. Il cherchait, trouvait et recopiait les manuscrits rares.

Dans la liste des manuscrits de Khlatétsi l'on découvre non seulement de simples copies, telles que celles de l'Evangile, du Lectionnaire, du Bréviaire, etc., mais encore des recueils rituels rédigés par lui-même, comme, par exemple, des Sinaxaires, un Lectionnaire de fête, un Gandzaran; des commentaires, tels que le Commentaire à l'Evangile selon Jean, l'abrègement du Commentaire au Pentateuque appartenant à la plume de Vardan Aréveltzi et des oeuvres personnelles, comme l'"Histoire de trois époques en questions et réponses", etc.